Հավելված N 1
ՀՀ կառավարության 2009 թվականի
սեպտեմբերի 17-ի N 1135 - Ն որոշման

Հ Ա Յ Ե Տ Ա Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՏԵՍՉԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ

1. Նպատակը
2. Իրավիճակը Հայաստանում
3. Միջազգային փորձը
4. Տեսչական բարեփոխման ընթացքը
   4.1. Տեսչական բարեփոխումների համակարգման խորհուրդը: Խորհրդի կազմը, գործառույթները, քարտուղարությունը
   4.2. Պետության և գործարար համայնքի միջև արդյունավետ երկխոսության և համագործակցության ապահովումը
   4.3. Տեսչական գործընթացներում կրկնվող և համընկնող գործառույթների բացահայտումը և բացառումը
   4.4. Տեսուչների վերապատրաստումները
   4.5. Բարեփոխումների իրականացումը յուրաքանչյուր առանձին տեսչությունում՝[1] պիլոտային սկզբունքով:
5. Գործընթացների նկարագրությունը: Բարեփոխումների շարունակականության ապահովումը
6. Ռեսուրսները

1. ՆՊԱՏԱԿԸ

Տեսչական գործընթացը[2] ժամանակակից պետություններում գործադիր իշխանության կողմից կիրառվող գործիք է՝ ուղղված օրենքների և այլ իրավական

[1] Սույն հայեցակարգում «տեսչություն» եզրույթը ներառում է վերահսկողական, հսկողական կամ ստուգման գործառույթ իրականացնող գործադիր իշխանության մարմին, գործադիր իշխանության մարմնի ստորաբաժանում, տեղական ինքնակառավարման մարմին կամ տեղական ինքնակառավարման մարմնի ստորաբաժանում:
[2] Սույն Հայեցակարգում «տեսչական գործընթաց» եզրույթը ներառում է գործադիր իշխանության մարմինների կողմից իրականացվող ցանկացած վերահսկողական, հսկողական կամ ստուգման գործընթաց:

ակտերի պահանջների կատարման նկատմամբ պետական հսկողության ապահովմանը: Սակայն պետական հսկողությունը, որը պետությունից բավական մեծ ռեսուրսներ ու ջանքեր է կլանում, ինքնանպատակ չէ, այլ ուղղված է հասարակության և նրա յուրաքանչյուր անդամի իրավունքների ու օրինական շահերի պաշտպանությանը, անվտանգության ապահովմանը: Այն կոչված է աջակցելու տնտեսավարող սուբյեկտներին՝ գործել օրենսդրության շրջանակներում: Մյուս կողմից, տեսչական ստուգումները ռեսուրսներ և ժամանակ են կլանում տնտեսավարող սուբյեկտներից, դրան գումարած նաև տեսուչների՝ «իշխանությունը» չարաշահելու հակումները, տեսչական գործընթացը դարձնում են առավել անարդյունավետ: Ասվածից հետևում է, որ ոչ ճիշտ կազմակերպելու դեպքում տեսչական ստուգումները կարող են լուրջ խոչընդոտ հանդիսանալ գործարար միջավայրի համար, սահմանափակել ներդրումները՝ միաժամանակ չլուծելով այն խնդիրները, որոնց լուծման համար պետությունը ռեսուրսներ է ներդնում:

Սույն հայեցակարգի նպատակն է նախանշել Հայաստանում տեսչական բարեփոխումների հիմնական ուղղությունները, որոնց իրականացումը կնպաստի տեսչական գործընթացի արդյունավետության բարձրացմանը: Հայեցակարգը ֆիսկալ նպատակ չի հետապնդում, այսինքն տեսչության արդյունավետությունը չի չափվելու գանձված տուգանքների քանակով ու մեծությամբ:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը լի է վճռականությամբ և պատրաստ է ջանքեր գործադրել լուծելու համար տեսչական գործընթացում առկա խնդիրները, որոնք խոչընդոտում են պետության, հասարակության և տնտեսավարող սուբյեկտների իրավունքների և օրինական շահերի միջև հավասարակշռության ապահովմանը, ինչի համար նախ և առաջ անհրաժեշտ է ազնվորեն վերլուծել առկա իրավիճակը՝ բարեփոխումների հաջող ընթացքն ապահովելու նպատակով:

2. ԻՐԱՎԻՃԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հայաստանում ստուգումներն իրականացվում են «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի հիման վրա՝ 18 տարբեր պետական մարմինների կողմից՝

1. ՀՀ էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի շուկայի և սպառողների շահերի պաշտպանության պետական տեսչություն
2. ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի բնապահպանության պետական տեսչություն
3. ՀՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի սննդամթերքի անվտանգության և անասնաբուժական պետական տեսչություն
4. ՀՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի բույսերի կարանտինի և երկրագործության պետական տեսչություն
5. ՀՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի գյուղատնտեսական տեխնիկայի պետական տեսչություն
6. ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչություն
7. ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության աշխատակազմի ՀՀ տրանսպորտային տեսչություն
8. ՀՀ քաղաքաշինության նախարարության աշխատակազմի քաղաքաշինության պետական տեսչություն
9. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի ՀՀ աշխատանքի պետական տեսչություն

10. ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի լեզվի պետական տեսչություն
11. ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի կրթության պետական տեսչություն
12. ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմի էներգետիկայի պետական տեսչություն
13. ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ընդերքի վերահսկողության պետական տեսչություն
14. ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի մետաղափորձական վերահսկողության տեսչություն
15. ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի պետական հրդեհային տեսչություն
16. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի հարկային ծառայություն
17. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի մաքսային ծառայություն
18. ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի աշխատակազմի պետական կոմիտեի գեոդեզիայի և հողային պետական տեսչություն

Տեսչությունների ցանկը սպառիչ չէ, քանի որ ուղղակիորեն կամ անուղղակիորեն տեսչական գործառույթներ են իրականացնում նաև այլ մարմիններ ինչպես հանրապետական, այնպես էլ՝ տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մակարդակում: Սակայն տեսչական գործառույթներ իրականացնող մարմինների նշված ցանկը բավարար է ստուգումների իրականացման նոր համակարգի ներդրման համար: Տեսչական մյուս գործառույթները կբացահայտվեն և բարեփոխումների ծրագրում կներառվեն բարեփոխումների ընթացքում:

Չնայած այն հանգամանքին, որ 2000 թվականի հուլիսի 1-ից գործում է «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքը, որը սահմանում է ստուգումների անցկացման միասնական մեխանիզմներ, տեսչական գործընթացները կարգավորող օրենսդրությունն ընդհանուր առմամբ աչքի է ընկնում բազմաթիվ թերություններով, պարունակում է տեսչական մարմինների գործառույթների կրկնություններ, գործընթացների կարգավորման բացեր և կարգավորման թերի մեխանիզմներ: Զգտելով բարեփոխել տեսչական համակարգը՝ մինչ օրս հիմնական շեշտը դրվել է օրենսդրության վրա, իմպլեմենտացիայի հարցերը մղվել են երկրորդ պլան, արդյունքում ոլորտը կարգավորող օրենսդրության կիրառումը տնտեսավարող սուբյեկտների համար խնդիրներ է առաջացնում գործարարությամբ զբաղվելու տեսանկյունից: Միևնույն ժամանակ հանրային վարչարարության մշակույթը, այդ թվում՝ նաև տեսչական մարմիններում, դեռևս պտտվում է «ոստիկանական» գաղափարների, ինչպես նաև սահմանված կանոնների հարկադիր կատարումն ապահովելու նպատակով վարչական իշխանության օգտագործման շուրջ: Բացակայում է տնտեսավարող սուբյեկտին որպես «հաճախորդ» դիտելու մշակույթը, որին պետք է խրախուսել և օգնել իր գործունեությունը սահմանված պահանջներին համապատասխանեցնելու հարցում: Հայեցակարգն առավելապես շեշտադրում է նոր տեսչական համակարգի իմպլեմենտացիային ուղղված հարցեր, ներառյալ տեսչական ստուգումների նպատակադրումը, տվյալների բազաների ձևավորումը, տեսուչների վերապատրաստումները, վերահսկվողների համար ընկալելի, կախատեսելի և պարզ ստուգման ընթացակարգերի ներդրումը: Բարեփոխման իրականացումը հնարավորություն կտա ձևավորելու միջազգային ստանդարտներին համապատասխան տեսչական համակարգ և երկիր ներգրավել ֆինանսական լուրջ ներդրումներ:

Համաշխարհային բանկի «Գործարարությամբ զբաղվելը» (Doing Business) և Օտարերկրյա ներդրումների խորհրդատվական ծառայության (FIAS) հետազոտությունների համաձայն ներդրումների հետ կապված վարչական միջավայրը նկարագրելիս՝ ամենահաճախակի բողոքները վերաբերում են տեսչական ստուգումներին: Եվ սա ոչ միայն Հայաստանին բնորոշ խնդիր է, այլև անցումային շատ երկրներին: Բացի դրանից, Համաշխարհային բանկի գնահատմամբ, տնտեսավարող սուբյեկտների և տեսուչների միջև փոխհարաբերությունները լուրջ խնդիր են առաջացնում նաև կոռուպցիայի տեսանկյունից:

Ընդհանուր առմամբ, տեսչական գործընթացը Հայաստանում բնութագրվում է հետևյալ կերպ՝

*1. **Հաճախակի, չհամակարգված և ոչ տեղին ստուգումներ:*** Շատ ցածր է տեսուչների միջև տեղեկատվության փոխանակման մակարդակը: Անգամ նույն տեսուչի ստուգումները համանման հանգամանքներում ամեն անգամ կարող են տարբեր արդյունքներ արձանագրել:

*2. **Տեսուչների կոպիտ և անհարգալից վարքագիծ:*** Հատկապես տեղում ստուգումների ժամանակ տեսուչները հաճախ դրսևորում են կոպիտ և անհարգալից վարքագիծ՝ ստուգման ենթարկվողների նկատմամբ:

*3. **Ոչ թափանցիկ տեսչական գործընթացներ:*** Տնտեսավարող սուբյեկտները հիմնականում չեն պատկերացնում կամ շատ մոտավոր պատկերացում ունեն ինչպես տեսուչների, այնպես էլ իրենց իրավունքների և պարտավորությունների վերաբերյալ: Հաճախ պարզ չեն լինում տեսչության մանդատը, իրավասությունների շրջանակը և ստուգումների նպատակները:

*4. **Ոչ արդյունավետ բողոքարկման մեխանիզմներ:*** Բացակայում են բողոքարկման արդյունավետ ռեալ մեխանիզմները: Բողոքարկումը տեսչության ղեկավարին հաճախ նպատակահարմար չէ ներդրողների համար հետագայում տվյալ տեսուչի հետ խնդիրներ չունենալու նկատառումով: Այլընտրանքային միջոցը՝ դատարանը, երկարատև և ծախսատար գործընթաց է:

*5. **Ծանրաբեռնող կանոններ:*** Տուգանքներ կարող են գանձվել և հաճախ գանձվում են ոչ էական «խախտումների» համար: Տեսուչներին տրված է խախտումները գնահատելու և տուգանք նշանակելու շատ լայն հնարավորություն: Չնայած տուգանքների չափերը շատ բարձր չեն (հիմնականում չափազանց ցածր են իրենց նպատակին ծառայելու համար), տնտեսավարող սուբյեկտների համար առավել խնդրահարույց է տեսուչների կողմից անհանգստություն պատճառելու գործոնը, ինչպես նաև այն ժամանակը, որ տնտեսավարող սուբյեկտների ղեկավարներն ստիպված են ծախսել տեսուչների հետ:

*6. **Վարչական կոռուպցիա:*** Քանի որ տեսուչներն ունեն իրավասությունների լայն շրջանակ և հաշվետվողականության ցածր մակարդակ, տեղում ստուգումները մեծ հնարավորություն են ստեղծում կաշառքի և ոչ պաշտոնական վճարումների համար: Համաշխարհային բանկի կոռուպցիայի ընկալման ցուցանիշի համաձայն Հայաստանը 2008 թվականի դրությամբ ունի 99 միավոր, երբ 1-ը առավելագույնն է, 179-ը՝ նվազագույնը: Այս ցուցանիշը համադրելի է Անկախ Պետությունների

Համագործակցության անդամ պետությունների ցուցանիշների հետ, սակայն չափազանց ցածր է Արևելյան և Կենտրոնական Եվրոպայի երկրների ցուցանիշների համեմատությամբ:

7. ***Տեսչական գործընթացում գործառույթների կրկնորդումներ:*** Վերահսկման միևնույն օբյեկտը միևնույն հարցով «ստուգման է ենթարկվում» բազմակի անգամ՝ տարբեր տեսչությունների կողմից: Հաճախ պարզ չի լինում տեսչության իրավասության ոլորտը և շրջանակը:

Հայաստանում գործող տեսչական համակարգի առավել մանրամասն վերլուծությունը[3] միջազգային փորձի հետ համադրության տեսանկյունից ներկայացված է հավելվածում:

Ընդհանուր առմամբ միջազգային փորձի վերլուծությունը ցույց է տալիս, որ հանրային կառույցների առավել մեծ անարդյունավետությամբ և կոռուպցիայի առավել լայն տարածվածությամբ աչքի ընկնող երկրներում, որոնք սահմանված կանոններն ապահովելու համար ունեն հարկադրանքի, ինչպես նաև զսպումների և հակակշիռների նվազագույն մեխանիզմներ, հաճախ կիրառվում է տեսչական գործընթացների խիստ կարգավորում, իրականացվում են հաճախակի ստուգումներ:

Տեսչական համակարգի թերություններն ուղղակիորեն ազդում են երկրի ներդրումային միջավայրի վարկանիշի և երկրի մրցունակության վրա: Միջազգային կառույցների կողմից տարբեր չափորոշիչներով գործարար միջավայրի գնահատման արդյունքներով Հայաստանի ցուցանիշները չնայած համադրելի են Անկախ Պետությունների Համագործակցության երկրների հետ, սակայն էականորեն զիջում են Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրներին:

Տեսչական բարեփոխումների ճիշտ, արդյունավետ և հետևողական իրականացումն էականորեն կբարելավի երկրի ներդրումային միջավայրի վարկանիշը, որը ներկայումս չի բավարարում ոչ Հայաստանի բնակչությանը, ոչ կառավարությանը:

3. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԸ

Բոլոր նշված խնդիրները կարող են վերացվել որոշակի գործիքների կիրառման շնորհիվ, որոնք վաղուց արդեն ներդրվել են տարբեր զարգացած և զարգացող երկրներում: Սակայն այդ գործիքներն անհրաժեշտ է կիրառել զգուշորեն՝ հաշվի առնելով երկրում և կոնկրետ ժամանակաշրջանում գոյություն ունեցող իրողությունները:

[3] Գնահատումը կատարվել է Միջազգային ֆինանսական կորպորացիայի փորձագետների կողմից՝ 2008 թվականի օգոստոսի 27-ից սեպտեմբերի 3-ը Հայաստանի տեսչական համակարգի գնահատման նպատակով Հայաստան կատարած այցի՝ ՀՀ գործադիր իշխանության ներկայացուցիչների, այդ թվում՝ նաև տեսչական մարմինների պաշտոնատար անձանց և մասնավոր հատվածի ներկայացուցիչների հետ քննարկումների արդյունքների հիման վրա (հիմք՝ տեսչական ստուգումների գնահատման հաշվետվություն):

Այսպես, դիտարկենք այն գործիքները, որոնք կիրառվում են օտարերկրյա պետությունների կողմից՝ տեսչական գործընթացում առկա խնդիրների հաղթահարման համար.

*1. **Հաճախակի, չհամակարգված և ոչ տեղին ստուգումները*** բացառելու նպատակով կիրառվում է ստուգումների թիրախավորման՝ ռիսկի վրա հիմնված ստուգումների համակարգը: Առանց ռիսկի վրա հիմնված ստուգումների համակարգի կիրառման՝ տեսուչներն ստիպված են լինում այցելել բոլոր վերահսկման օբյեկտները՝ ըստ նախապես հաստատված ժամանակացույցի, առանց հաշվի առնելու ռիսկայնությունը կամ տվյալ վերահսկման օբյեկտի «անցած ուղին»: Միևնույն ժամանակ, տեսչությունը չունի բոլոր վերահսկման օբյեկտներն այցելելու բավարար մարդկային և տեխնիկական կարողություններ, և ստուգվում են ոչ ավելի, քան վերահսկման օբյեկտների 10-15%-ը[4]: Արդյունքում պետության կողմից ներդրված ռեսուրսներն օգտագործվում են ոչ արդյունավետ, իսկ այն նպատակները, որոնց իրականացման համար պետությունը ռեսուրսներ է ներդնում, չեն իրականացվում:

Ռիսկի վրա հիմնված ստուգումների համակարգը հնարավորություն է տալիս հետևելու ռիսկերին՝ ըստ ոլորտների ու վերահսկման օբյեկտների, և տեսչական ստուգումները նպատակադրում է դեպի այն ոլորտները և վերահսկման օբյեկտները, որոնք առավել ռիսկային են:

Համակարգի ներդրման համար անհրաժեշտ է ձևավորել բավականաչափ մանրամասն տվյալների բազա՝ առանձնացնելով ռիսկերի չափանիշները ըստ ոլորտների, ամրագրելով յուրաքանչյուր վերահսկման օբյեկտի «անցած ուղին», ինչը հնարավորություն կտա ռիսկերը նպատակադրել դեպի առավել ռիսկային ոլորտները և վերահսկման օբյեկտները՝ միաժամանակ պաշտպանելով տեղեկատվության գաղտնիությունը:

Մանրամասն տվյալների բազայի ապահովումը պետք է իրականացվի՝ վերահսկման օբյեկտներին հնարավորինս քիչ «անհանգստացնելով»: Տեսչությունները համաձայնվում են միևնույն տեղեկատվությունը երկու անգամ չպահանջել որևէ վերահսկման օբյեկտից՝ փոխարենն ստեղծելով տվյալների արդյունավետ փոխանակման և համատեղ օգտագործման արդյունավետ համակարգ: Միևնույն ժամանակ ստուգումների իրականացումը հնարավորինս տեղափոխվում է վերահսկման օբյեկտներից դեպի տեսուչների գրասենյակներ՝ շեշտը առավելապես դնելով առկա տվյալների վերլուծությունների վրա:

Որպեսզի նշված համակարգը գործի արդյունավետ, տեսուչները պետք է պատրաստ լինեն աշխատել նոր մոտեցումներին համապատասխան, կատարեն վերլուծական աշխատանք: Այս առումով կարևորվում է տեսուչների վերապատրաստման և ատեստավորման գործընթացի՝ նոր համակարգին համապատասխան վերափոխումը:

*2. **Տեսուչների կոպիտ և անհարգալից վարքագիծը*** հաղթահարելու նպատակով կիրառվում է էթիկայի կանոնների և այդ կանոնները խախտելու դեպքում

[4] Գնահատումը կատարվել է Միջազգային ֆինանսական կորպորացիայի փորձագետների կողմից՝ 2008 թվականի օգոստոսի 27-ից մինչև սեպտեմբերի 3-ը Հայաստանի տեսչական համակարգի գնահատման նպատակով Հայաստան կատարած այցի՝ ՀՀ գործադիր իշխանության ներկայացուցիչների, այդ թվում՝ նաև տեսչական մարմինների պաշտոնատար անձանց և մասնավոր հատվածի ներկայացուցիչների հետ քննարկումների արդյունքների հիման վրա (հիմք՝ տեսչական ստուգումների գնահատման հաշվետվություն):

պատասխանատվության նորմերի կիրառման գաղափարը։ Սակայն միայն էթիկայի կանոնների ներդրումը բավարար չէ մի ամբողջ համակարգի մտածողություն, հետևաբար նաև

վարքագիծ փոխելու համար։ Անհրաժեշտ է հետևողական աշխատանք իրականացնել տեսուչների հոգեբանությունը փոխելու ուղղությամբ, այդ թվում՝ նաև հատուկ վերապատրաստման ծրագրերի միջոցով։ Այսօր Հայաստանում տեսչական գործառույթներ իրականացնողների մոտ տարածված է ստուգվող կազմակերպության մոտ պետական կառույցի վերադասության գաղափարը, ինչը զարգացած, անգամ զարգացող երկրներում անթույլատրելի է։ Տեսչությունը, ինչպես և ամբողջ պետական համակարգը, հասարակությանը ծառայություն մատուցող կառույց է, և խոսք անգամ չի կարող լինել ստուգվողի նկատմամբ ստորադասության կամ վերադասության մասին։ Սա լրջագույն խնդիր է, որ ակնկալվում է հաղթահարել տեսչական բարեփոխման ընթացքում՝ ձգտելով ապահովել անցումը «վերահսկողական» մտածելակերպից դեպի «խորհրդատվական» մտածելակերպի՝ ներդնելով և զարգացնելով վերահսկվող օբյեկտին որպես «հաճախորդ», այլ ոչ թե որպես «վերահսկվող» դիտելու մշակույթը։ Սա չափազանց բարդ և աշխատատար պրոցես է՝ ուղղված պետական վերահսկողության մոտեցումների վերաբերյալ տեսուչների ինքնագիտակցության փոփոխությանը։ Այս գործընթացը պետք է իրականացվի պարբերաբար՝ ամրապնդելու համար առողջ հարաբերություններ տեսուչների և մասնավոր հատվածի միջև։

Հատկապես կարևոր է տեսուչների իրավունքների և պարտավորությունների միջև հավասարակշռության ապահովման, իրավասություններին համարժեք հաշվետվողականության և պատասխանատվության համակարգի ներդրման հարցը։

*3. **Ոչ թափանցիկ տեսչական գործընթացները*** բացառելու նպատակով կիրառվում է տեսչական գործընթացների պարզեցման և վերահսկման օբյեկտների համար կանխատեսելիության ապահովման մեխանիզմը՝ հսկողական և վերահսկողական գործառույթների հստակ տարանջատմամբ՝ ըստ ոլորտային առանձնահատկությունների։ Սակայն հաջողության հասնելու պարտադիր պայման է հանդիսանում ճիշտ կոմունիկացիան վերահսկման օբյեկտների հետ։ Վերջիններս պետք է տեղեկացված լինեն ինչպես տեսչական գործընթացների, տեսչության մանդատի, այնպես էլ իրենց և տեսուչների իրավունքների և պարտականությունների շրջանակի վերաբերյալ։ Այդ նպատակով յուրաքանչյուր տեսչություն պետք է հրապարակի մանրամասն, թափանցիկ և կայուն ընթացակարգեր, որոնք կարգավորում են տեսչական ստուգման բոլոր քայլերը՝ մինչև խնդիրների վերջնական լուծումը։ Իրավունքների իմացությունը հանդիսանում է փոխադարձ վերահսկման և կամայականությունների բացառմանն ուղղված ամենաարդյունավետ միջոցը՝ պայմանով, որ գործում են արդյունավետ բողոքարկման մեխանիզմներ։

*4. **Ոչ արդյունավետ բողոքարկման մեխանիզմների*** հաղթահարման ճանապարհը ևս դրանց պարզեցումն է՝ ապահովելով բողոքարկման գործընթացի արագությունը, արդյունավետությունը, թափանցիկությունը։ Տեսչությունների կողմից պետք է առաջարկվեն վերահսկման օբյեկտների կողմից տեսչությունների գործունեության բողոքարկման մատչելի մեխանիզմներ։ Բոլոր տեսչություններում պետք է գործեն թեժ գծեր, անհրաժեշտության դեպքում բողոքները պետք է լինեն անանուն։ Այստեղ ևս պետք է լինի արդյունավետ կոմունիկացիա վերահսկման օբյեկտների հետ. վերջիններս պետք է հստակ իմանան բողոքարկման հնարավորությունների, գործընթացի բաղկացուցիչ քայլերի հերթականության և իրավունքների և պարտականությունների շրջանակի մասին։

*5. **Ծանրաբեռնող կանոնների*** հաղթահարման հիմնական միջոցն օրենսդրության փորձաքննությունն է: Տեսչության գործառույթն օրենսդրության պահանջների պահպանության նկատմամբ վերահսկողության ապահովումն է, սակայն այդ կանոնները ևս պետք է լինեն ռացիոնալ՝ սահմանելով նվազագույն արգելքներ հասարակության և նրա յուրաքանչյուր անդամի իրավունքների ու օրինական շահերի պաշտպանության, անվտանգության ապահովման նպատակով: Բացի օրենսդրության պահանջներից՝ ռացիոնալ, խախտումներին համարժեք և արդար պետք է լինեն նաև պատասխանատվության

միջոցները: Անհրաժեշտ է ձևավորել պատասխանատվության միջոցների կիրառման համակարգ, որը կապահովի օբյեկտիվության հնարավոր առավելագույն մակարդակ՝ ներառելով նաև շահերի բախման հաղթահարման մեխանիզմներ: Պատասխանատվության միջոցները և դրանց կիրառման մեխանիզմները պետք է նպաստեն խախտումների արագ ուղղմանը:

6. Տեսչական համակարգի բարեփոխումների իրականացումը կնպաստի համակարգում ***վարչական կոռուպցիայի*** մակարդակի կրճատմանը:

7. ***Տեսչական գործընթացում գործառույթների կրկնորդումները*** բացահայտելու և բացառելու նպատակով կիրառվում է տեսչական գործառույթների «քարտեզագրման» մեխանիզմը, որը ներառում է՝

- յուրաքանչյուր տեսչության վերահսկման ոլորտի ուսումնասիրություն (ինչպես հանրապետական, այնպես էլ տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մակարդակում),
- կրկնվող և համընկնող գործառույթների վերհանում,
- բնույթով մոտ տեսչական գործառույթների ընդհանրացում,
- գործառույթների կրկնությունների և համընկնումների բացառում՝ հստակ տարանջատելով տեսչական գործառույթներ իրականացնող մարմինների իրավասությունները՝

  1) հանրապետական գործադիր իշխանության մարմինների միջև.

  2) պետական, տարածքային և համայնքային մարմինների միջև:

Նշված գործիքների ներդրման և տեսչական նոր, առավել ժամանակակից և արդյունավետ համակարգի ներդրումը պահանջում է համակարգային մոտեցում: Տարբեր երկրներում տեսչական նոր համակարգի ներդրման բարդությունը և մեխանիզմները տարբեր են՝ կախված տվյալ երկրում գործող տեսչական համակարգի մոդելից, զարգացածության աստիճանից:

Տարբեր երկրներ կիրառում են տեսչական գործընթացների կարգավորման տարբեր համակարգեր, որոնք ընդհանուր առմամբ կարելի է բաժանել երեք խմբի.

1. ***Ապակենտրոնացված տեսչական համակարգ***

Այս համակարգի դեպքում տեսչական գործընթացներն իրականացնում են տարբեր պետական մարմիններ՝ յուրաքանչյուրն իր գործունեության ոլորտում:

Ապակենտրոնացված համակարգը մի կողմից նպաստում է տեսուչների մասնագիտացմանն ըստ ոլորտների, մյուս կողմից հանգեցնում է փորձառության ցրմանը. սովորաբար տեսչությունները չեն կարողանում կանոնավոր կերպով օգտվել միմյանց ձեռք բերած փորձից:

Համակարգի ամենաէական թերություններից է տեղեկատվության փոխանակման բացակայությունը, քանի որ ապակենտրոնացված տեսչությունների համակարգ կիրառող

երկրների մեծամասնությունում առկա չէ ինստիտուցիոնալացված տեղեկատվության փոխանակում: Համակարգման բացակայությունը լուրջ խոչընդոտ է գործարարության համար. տնտեսավարող սուբյեկտներն ստիպված են իրենց ժամանակը ծախսել տեսչություններին հաշվետվություններ ներկայացնելով կամ վերջիններիս թույլ տալով իրենց մոտ երկարատև և բազմապիսի ստուգումներ անցկացնել: Համակարգը նպաստավոր պայմաններ է ապահովում կոռուպցիոն ռիսկերի առաջացման համար, ինչը ևս վտանգում է գործարար միջավայրը:

Ապակենտրոնացված համակարգի դեպքում դժվար է խուսափել տեսչական համակարգում գործառույթների կրկնություններից: Ստուգումների որակի և ընթացակարգերի տարբերությունները գործարարների համար նվազագույնի են հասցնում կանխատեսելիությունը: Սրան նպաստում են նաև տեսչական ստուգումների ոչ համարժեք արդյունքները համանման իրավիճակներում:

Չնայած նշված թերություններին՝ ապակենտրոնացված համակարգ կիրառվում է պետությունների մեծամասնությունում, այդ թվում՝ նաև Հայաստանում: Սակայն եթե ծառայությունների մատուցման բազմադարյա մշակույթ ունեցող եվրոպական երկրների համար ապակենտրոնացված համակարգի կիրառումն այնքան էլ խնդրահարույց չէ, ապա նույնը չի կարելի ասել անցումային ժամանակաշրջանի պետությունների, այդ թվում՝ Հայաստանի մասին:

*2. **Կենտրոնացված տեսչական համակարգ***

Այս համակարգի դեպքում տեսչական գործընթացների իրականացումը կենտրոնացվում է մեկ կառույցում:

Կենտրոնացված տեսչական համակարգն ապահովում է փորձագիտական հմտությունների կենտրոնացում, առավել դյուրին է դարձնում պլանավորման և բյուջետավորման գործընթացները, նպաստում է կրկնվող գործառույթների առավել դյուրին բացահայտմանն ու բացառմանը, տվյալների հավաքագրմանը մեկ կառույցում:

Սակայն այստեղ առկա է ավելի բյուրոկրատական գործընթացների և նվազ ճկուն համակարգի ձևավորման հավանականություն, ինչն էականորեն կխոչընդոտի արդյունքների բարելավմանը: Բացի դրանից, շատ դժվար է ապակենտրոնացված համակարգից ուղղակի անցումը դեպի կենտրոնացված համակարգ, ինչը պայմանավորված է աշխատողների դիսլոկացիայի և մի քանի կառույցների միավորման բավականին բարդ գործընթացով:

Կենտրոնացված համակարգ գործում է Չինաստանում:

*3. **Ապակենտրոնացված տեսչական համակարգ՝ ուղեկցված աշխատանքների համակարգմամբ***

Հաշվի առնելով, որ ԽՍՀՄ երկրներում (նաև սոցիալիստական շատ երկրներում) գործել է տեսչությունների կենտրոնացված համակարգ, իսկ ԽՍՀՄ-ի փլուզումից հետո հետխորհրդային տարիներին երկրների գերակշռող մեծամասնությունն անմիջապես անցում է կատարել ապակենտրոնացված տեսչական համակարգի, տեսչությունների զարգացման էվոլյուցիոն գործընթացը խաթարվել է: Տեսչական համակարգի զարգացման այս բացը լրացնելու համար շատ հետխորհրդային երկրներ կատարել են մեկ քայլ հետ՝ անցնելով որոշակի համակարգմամբ ուղեկցված տեսչական համակարգի՝ տեսչական համակարգի զարգացման առավել արագ աճ ապահովելու նպատակով:

Համակարգմամբ ուղեկցված ապակենտրոնացված համակարգը ձևավորվել է կենտրոնացված և ապակենտրոնացված համակարգերի համադրումից: Տեսչական գործընթացներն իրականացվում են առանձին պետական մարմինների կողմից (ինչպես ապակենտրոնացված համակարգի դեպքում), զուգահեռաբար ստեղծվում է որոշակի համակարգող մարմին: Համակարգող մարմինների գործառույթները տարբեր երկրներում ունեն որոշակի առանձնահատկություններ:

Աշխատանքների համակարգմամբ ուղեկցված ապակենտրոնացված տեսչական համակարգ կիրառում են շատ անցումային երկրներ, ինչպիսիք են Լատվիան, Սլովենիան, Ուկրաինան, Ուզբեկստանը:

4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ ԿԻՐԱՌԵԼԻ ՄՈԴԵԼԸ: ՏԵՍՉԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Այսպիսով, մի կողմից ունենք Հայաստանում գործող տեսչական համակարգի վերհանված իրողությունները, մյուս կողմից՝ միջազգային փորձի վերլուծությունը, որոնք համադրելով, ակնհայտ է դառնում, որ տեսչական բարեփոխումների լավագույնս իրականացման համար անհրաժեշտ է տեսչական գործընթացի որոշակի համակարգում և բարեփոխումների ուղղորդում՝ ստեղծելով շահերի բախման հստակ և գործուն համակարգ՝ մի կողմից հասարակության, մյուս կողմից՝ գործարարության շահերի ապահովման նպատակով:

Տեսչական մի համակարգից մյուսին անցումը բավականաչափ «ցավոտ» գործընթաց է, որի կտրուկ իրականացումը բերում է տեսչական համակարգի խաթարման: Միևնույն ժամանակ տեսչական բարեփոխումները ենթադրում են երկրի ամբողջ տեսչական համակարգի՝ ապակենտրոնացված համակարգում գործող բոլոր տեսչությունների գործունեության միջազգային ստանդարտներին համապատասխան մակարդակի ապահովում, ինչը հնարավոր չի լինի իրականացնել առանց բարեփոխումների գործընթացի որոշակի համակարգման:

Ելնելով նշվածից՝ հայեցակարգով նախատեսվում է ժամանակակից տեսչական համակարգին անցում կատարելու ամենամեղմ տարբերակը՝ միայն տեսչական բարեփոխումների գործընթացի համակարգումը:

N 1 աղյուսակում ներկայացված են Հայաստանում տեսչական ստուգումների հիմնական թերությունները և դրանց առաջնահերթ լուծումները:

Աղյուսակ N 1

Խնդիրները	Լուծումները				
	պետական-մասնավոր երկխոսություն	ռիսկի վրա հիմնված ստուգումների համակարգ/ տվյալների բազա	ստուգման թերթիկներ	տեսուչների վարքագծի կանոններ	գործառույթների կրկնորդումների բացառում
Հաճախակի, չհամակարգված և ոչ տեղին ստուգումներ	✓	✓			✓
Տեսուչների կոպիտ և անհարգալից վարքագիծ	✓		✓	✓	
Ոչ թափանցիկ տեսչական գործընթացներ	✓		✓	✓	
Ոչ արդյունավետ բողոքարկման մեխա-նիզմներ	✓				
Ծանրաբեռնող կանոններ	✓				✓
Վարչական կոռուպցիա	✓		✓	✓	

Ելնելով նշվածից և տեսչական համակարգն արագ և արդյունավետ բարեփոխելու անհրաժեշտությունից՝ պետք է սահմանել բարեփոխումների հիմքում դրվող հիմնական քայլերը և դրանց իրականացման առաջնահերթությունները։ Դրանք են՝

Հորիզոնական բարեփոխումներ

- տեսչական բարեփոխումների համակարգման խորհրդի՝ որպես բարեփոխումնե-րի շարժիչ ուժի ստեղծում,
- պետության և գործարար համայնքի միջև արդյունավետ երկխոսության և համագործակցության ապահովում,
- տեսչական գործընթացում կրկնվող և համընկնող գործառույթների բացահայտում և բացառում, իրավասությունների հստակ տարանջատում՝
    1. հանրապետական գործադիր իշխանության մարմինների միջև.
    2. պետական, տարածքային և համայնքային մարմինների միջև,
- տեսուչների վերապատրաստումներ։

Ուղղահայաց բարեփոխումներ

- բարեփոխումների իրականացում բոլոր տեսչություններում՝ պիլոտային սկզբունքով, որն առնվազն կընդգրկի՝
    - ռիսկի վրա հիմնված տեսչական ստուգումների համակարգի ներդրում (հաճախակի, չհամակարգված և ոչ տեղին ստուգումների բացառման նպատակով),

- տեսչական գործընթացում ստուգման ցանկերի (check lists) և տեսուչների վարքագծի կանոնների ներդրում (որոնք նվազեցնում են անորոշությունները գործարարների համար),
- ուսուցումներ (որոնց նպատակն է փոխել տեսուչների մտածողությունն ու նրանց ծանոթացնել գոյություն ունեցող լավագույն փորձին)։

4.1. ՏԵՍՉԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ։ ԽՈՐՀՐԴԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ, ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Տեսչական բարեփոխումների համակարգման խորհուրդը (այսուհետ՝ խորհուրդ) ՀՀ վարչապետին առընթեր մշտապես գործող խորհրդակցական միջգերատեսչական մարմին է (միջգերատեսչական հանձնաժողով), որի նպատակը Հայաստանում տեսչական բարեփոխումների համակարգումը և ուղղորդումն է։

Խորհրդի նախագահը ՀՀ վարչապետն է։ Խորհրդում ընդգրկվում են տեսչական գործառույթներ իրականացնող հանրապետական գործադիր մարմինների ղեկավարները, ՀՀ արդարադատության նախարարը, ՀՀ Նախագահի աշխատակազմի և ՀՀ կենտրոնական բանկի ներկայացուցիչները։

Խորհրդի կազմում ընդգրկվում են նաև յոթ բիզնես ասոցիացիաների և սպառողների շահերի պաշտպանությամբ զբաղվող հասարակական կազմակերպությունների (այսուհետ՝ բիզնես ասոցիացիաներ) ղեկավարներ։ Հայաստանում գործող բիզնես ասոցիացիաների ղեկավարները խորհրդի կազմում ընդգրկվելու վերաբերյալ իրենց ցանկության մասին դիմում են ներկայացնում ՀՀ վարչապետին։ Բիզնես ասոցիացիաների ղեկավարները խորհրդի կազմում ընդգրկվում են վեցամսյա ժամկետով։ Յուրաքանչյուր վեց ամիսը մեկ անգամ խորհուրդը քննարկում է խորհրդի կազմում ընդգրկվելու վերաբերյալ նոր բիզնես ասոցիացիաների ընդգրկման մասին հարցը։ Միևնույն բիզնես ասոցիացիայի ղեկավարն անընդմեջ կարող է խորհրդի կազմում ընդգրկվել ոչ ավելի, քան երկու անգամ։

Խորհրդի գործառույթներն են՝

<u>Հորիզոնական բարեփոխման համակարգում</u>

*1. **Տեսչական բարեփոխումների ուղղորդում***

ա. քննարկում և հավանություն է տալիս տեսչական համակարգի բարեփոխման հիմնական ուղղություններին,

բ. ընտրում է տեսչական բարեփոխումների գործընթացում պիլոտային սկզբունքով ընդգրկման ենթակա տեսչություններ,

գ. վերահսկողություն է իրականացնում տեսչական բարեփոխումների ընթացքի նկատմամբ (մոնիթտորինգ, մոնիթորինգի արդյունքների վերլուծություն),

դ. քննարկում և հավանություն է տալիս տեսչությունների արդյունավետության գնահատման չափորոշիչներին,

ե. գնահատում է տեսչությունների գործունեության արդյունավետությունը,

զ. ապահովում է գործողությունների ծրագրի իրականացումը,

է. հավանություն է տալիս տեսչությունների աշխատանքի համակարգման և կանոնակարգման ծրագրին,

ը. քննարկում և հավանություն է տալիս տեսչությունների միջև տվյալների փոխանակման, ներառյալ տվյալների կենտրոնական բազայի ստեղծման մեխանիզմներին,

թ. հավանություն է տալիս տեսչությունների աշխատանքների կանոնակարգման, ստուգումների ընթացակարգերի ներդաշնակեցման, համատեղ ստուգումների իրականացման մեխանիզմներին,

ժ. քննարկում և հավանություն է տալիս տեսչական գործընթացները կարգավորող իրավական ակտերի՝ սույն հայեցակարգի խնդիրներին համապատասխանեցման վերաբերյալ առաջարկներին, այլ պետական մարմինների կողմից մշակված տեսչական գործընթացին առնչվող իրավական ակտերի նախագծերին,

ժա. քննարկում և հավանություն է տալիս մոնիթորինգի և գնահատման համակարգի ներդրման ծրագրին։

*2. **Գործարար համայնքի և հասարակության հետ համագործակցության և հետադարձ կապի ապահովումը***

ա. ապահովում է պետական և մասնավոր հատվածների միջև երկխոսությունը, նախատեսում է հետադարձ կապի ապահովման մեխանիզմներ,

բ. հավանություն է տալիս տեսչական բարեփոխումների, տեսուչների և ստուգման ենթակա անձանց իրավունքների, պարտականությունների և պատասխանատվության մասին հանրային իրազեկման ծրագրին՝ հասարակության և մասնավոր հատվածի համար կանխատեսելիության ապահովման նպատակով, ապահովում է բարեփոխումնե-րի հանրային քննարկումների իրականացումը,

գ. քննարկում և հավանություն է տալիս բողոքարկման արդյունավետ մեխանիզմների ներդրման ծրագրերին, քննարկում է տնտեսավարող սուբյեկտների կողմից ներկայացված բողոքների վիճակագրությունը, ինչպես նաև տեսչական ստուգումների գործընթացի պարզեցման և կանոնակարգման հարցեր՝ հիմնվելով վիճակագրության արդյունքների վրա։

<u>Ուղղահայաց բարեփոխման համակարգում</u>

*3. **Յուրաքանչյուր առանձին տեսչության գործունեության կատարելագործումը***

ա. քննարկում և հավանություն է տալիս ստուգում իրականացնող իրավասությունների հստակեցման, կրկնվող գործառույթների բացահայտման և բացառման, ստուգման թերի մեխանիզմների կատարելագործման ծրագրին,

բ. վերլուծում է ընդհանուր տեսչական համակարգը, ինչպես նաև տեսչությունների կառուցվածքը, գործառույթներն ու գործունեությունը կարգավորող իրավական ակտերի նախագծերը, հավանություն է տալիս նոր նախագծերին և վերահսկողություն է իրականացնում դրանց կիրարկման նկատմամբ,

գ. քննարկում և հավանություն է տալիս ստուգում իրականացնող մարմինների կառավարման համակարգերի բարելավման, տեսչական համակարգը կոռուպցիոն ռիսկերից զերծ պահելու նկատառումով տեսուչին հանիրավի հետապնդումներից պաշտպանելու երաշխիքների սահմանման ծրագրերին, տեսուչ-վերադաս հարաբերություններում էթիկայի կանոնների ներդրմանը,

դ. քննարկում և հավանություն է տալիս ստուգում իրականացնող մարմիններում շահերի բախման համակարգի ներդրման ծրագրին,

ե. քննարկում և հավանություն է տալիս տեսչությունների գործունեության պլանավորման, տեսչությունների եռամյա ռազմավարությունների հաստատման ծրագրերին (ռազմավարությունը պետք է ներառի տեսչության նպատակները, խնդիրները, քաղաքականությունը, ակնկալվող արդյունքները, մոնիթորինգի և գնահատման համակարգը),

զ. քննարկում և հավանություն է տալիս տեսչությունների ստուգման ծրագրերին,

է. քննարկում է տեսչությունների բյուջեների նախագծեր, կազմակերպչական, տարածքային, ծախսային, ֆինանսական և վարչական հարցեր,

ը. քննարկում և հավանություն է տալիս տեսուչների իրավունքների և պարտավորությունների հստակեցման, տեսուչների վարքագծի և դրանք խախտելու դեպքում պատասխանատվության նորմեր սահմանող կանոններին,

թ. քննարկում և հավանություն է տալիս ստուգումների իրականացման ընդհանուր սկզբունքներին (բարեփոխումների հիմքում պետք է դրվի հետևյալ սկզբունքը. տեսուչներն իրենց պարտականությունները պետք է կատարեն այնպես, որ իրավաբանական և ֆիզիկական անձանց գործունեությանը միջամտեն միայն այն աստիճանով, որը բացարձակապես անհրաժեշտ է ստուգումներն արդյունավետ իրականացնելու համար), ռիսկի գնահատման վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությանը,

ժ. քննարկում և հավանություն է տալիս տեսչությունների կատարելագործման, ներառյալ ստուգումների համար կատարողականի ցուցանիշների սահմանման և ներքին վերահսկողության աուդիտային համակարգի կատարելագործման համալիր ծրագրերին,

ժա. հավանություն է տալիս ստուգում իրականացնող պաշտոնատար անձանց ուսուցման ծրագրերին, քննարկում է վերապատրաստման արդյունքները։

Առաջին նիստի ընթացքում խորհուրդը հաստատում է իր աշխատակարգը։

Խորհուրդն իր գործունեությունն իրականացնում է սույն հայեցակարգին, յուրաքանչյուր վեց ամիսը մեկ անվամ ՀՀ կառավարության կողմից հաստատվող գործողությունների ծրագրին և իր աշխատակարգին համապատասխան։

Խորհրդի նիստերի ընթացքում տրված հանձնարարականներն ամրագրվում են նիստերի արձանագրություններում և ենթակա են պարտադիր կատարման՝ տեսչական գործընթացներ իրականացնող մարմինների կողմից։

Բարեփոխումների ընթացքում առաջացող օրենսդրական և (կամ) կոնկրետ այլ խնդիրների լուծման նպատակով ՀՀ վարչապետը, ըստ անհրաժեշտության, ձևավորում է միջգերատեսչական աշխատանքային խմբեր։

Խորհրդի գործունեությունն ապահովելու նպատակով ստեղծվում է խորհրդի գործունեությունն ապահովող գործադիր մարմին (այսուհետ՝ քարտուղարություն)։ Քարտուղարությունը ժամանակավորապես գործող ստորաբաժանում է[5], որը կոչված է օժանդակելու տեսչական բարեփոխումների ներդրման գործընթացին՝ իրականացնելով տեխնիկական և կազմակերպչական աջակցություն, և պատասխանատու է պիլոտային ծրագրերի իրականացման (համագործակցելով յուրաքանչյուր կոնկրետ տեսչությունում ձևավորված բարեփոխումների համար պատասխանատու թիմի հետ), պետություն–մասնավոր հատված երկխոսության կազմակերպման և հետադարձ կապի ապահովման, բարեփոխումների մոնիթորինգի և գնահատման, հանրային կապերի, տեսուչների վերապատրաստման ծրագրերի կազմակերպման համար։

N 2 գծապատկերում պարտկերված են տեսչական բարեփոխումների համակարգման խորհուրդը և քարտուղարությունը։

Գծապատկեր N 2

[5] Քարտուղարությունը գործելու է միայն տեսչական բարեփոխումների իրականացման ընթացքում և ենթակա է լուծարման՝ բարեփոխումների ավարտից հետո:



4.2. ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱՎՈՐ ՀԱՏՎԱԾՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

Հաշվի առնելով պետական և մասնավոր հատվածների միջև երկխոսության կարևորությունը, որը կենսական առաջնահերթություն է Հայաստանում տեսչական համակարգի բարելավման համար, առավել մեծ հրատապություն է ստանում տեսչություններին առնչվող ընթացիկ խնդիրների հայտնաբերման մեխանիզմի ստեղծումը, որը կապահովի այս խնդիրների շուրջ գործարար համայնքի հետ համագործակցությունը:

Հայաստանում տեսչական բարեփոխումների արդյունավետ կազմակերպման և դրանցից առավելագույն արդյունք ստանալու նպատակով բարեփոխման շարժիչ ուժ պետք է հանդիսանա գործարար համայնքը, հասարակության շահերը պետք է ներկայացնի կառավարությունը և հենց ինքը՝ հասարակությունը՝ ի դեմս հասարակական կազմակերպությունների և անհատների՝ հանրային քննարկումների միջոցով:

N 3 գծապատկերում ներկայացված են այն մեխանիզմները, որոնք կապահովեն արդյունավետ կապ և փոխգործակցություն գործարար համայնքի և կառավարության միջև՝ ստեղծելով բարեփոխումների իրականացման համար շահերի բախման կառուցողական միջավայր։

Գծապատկեր 3



1. Անհրաժեշտ է նշել, որ բարեփոխումը կրելու է շարունակական բնույթ, հետևաբար, գծապատկերում պատկերված ամբողջ պարբերաշրջանը, ներառյալ նաև հիմնախնդիրների (պրոբլեմների) բացահայտումը, կիրականացվեն պարբերաբար,

2. Շատ կարևոր է կառուցողական երկխոսությունը կառավարության և գործարար համայնքի միջև՝ բարեփոխումների առաջնայնությունները համաձայնեցնելու, ինչպես նաև գործողությունների ծրագրում ընդգրկելու տեսանկյունից,

3. Գործողությունների ծրագրի ընդունումը և անհրաժեշտ բարեփոխումների իրականացումը պետք է հետևողականորեն ապահովվեն կառավարության կողմից,

4. Գործարար միջավայրի ընթացիկ մոնիթորինգի և բարեփոխումների ազդեցության գնահատման արդյունքները ևս հիմք կհանդիսանան բարեփոխումների հաջորդ փուլում հիմնախնդիրների (պրոբլեմների) առավել արդյունավետ բացահայտման համար։

N 3 գծապատկերում նշված մեխանիզմով գործարար համայնք - կառավարություն կապի ռեալ ապահովման նպատակով այն անհրաժեշտ է ինստիտուցիոնալացնել հենց կառավարության ներսում, այն է՝ կոնկրետ կառույցի վրա դնել գործարար համայնք – կառավարություն կապն ապահովելու, գործարար համայնքի հետ միասին տեսչական գործընթացների թերությունները բացահայտելու, շահագրգիռ կերպով քննարկելու և լուծումներ գտնելու, դրանք իրականացնելու պատասխանատվությունը։ Նման կառույց կհանդիսանա տեսչական բարեփոխումների համակարգման խորհուրդը։ Գործարար համայնքի հետ քննարկումները կազմակերպում է քարտուղարությունը։

4.3. ՏԵՍՉԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ ԿՐԿՆՎՈՂ ԵՎ ՀԱՄԸՆԿՆՈՂ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄԸ ԵՎ ԲԱՑԱՌՈՒՄԸ

Տեսչությունների գործառույթների կրկնությունների ու համընկնումների բացառումը տեսչական համակարգի բարեփոխման կարևորագույն բաղադրիչ է։ Այս ուղղությամբ անհրաժեշտ է իրականացնել գործող օրենսդրության խորը վերլուծություն՝ տեսչությունների համընկնող գործառույթների բացահայտման նպատակով՝ հատկապես ուշադրություն դարձնելով՝

- տեսչությունների կառուցվածքն ու գործառույթները կարգավորող օրենսդրության վրա,
- տեսչությունների կողմից վերահսկվող տեխնիկական նորմատիվների, կանոնների և այլ պահանջների վրա,
- տեսուչների իրավունքների և պարտավորությունների (պատասխանատվության) միջև հավասարակշռության ապահովման վրա,
- նախարարությունների կամ տեսչությունների կողմից հաստատված այլ փաստաթղթերի վրա։

Գործող օրենսդրության ուսումնասիրությունը կիրականացվի ՀՀ արդարադատության նախարարության մասնագետների կողմից՝ ըստ անհրաժեշտության ընդգրկելով նաև անկախ փորձագետների։ ՀՀ արդարադատության նախարարության մասնագետները Խորհրդի կողմից խսահմանված ժամկետում քարտուղարություն են ներկայացնում հաշվետվություն, որը կներառի հետևյալ տվյալների համեմատական աղյուսակը.

- յուրաքանչյուր տեսչության վերահսկման ոլորտները (ինչպես հանրապետական, այնպես էլ տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մակարդակում),
- յուրաքանչյուր տեսչության գործառույթները,
- գործառույթների կրկնության և համընկնման հայտնաբերված ոլորտները։

Քարտուղարությունն ուսումնասիրում է հաշվետվությունը, հաշվետվությունում ներկայացված տվյալները քննարկում է գործարար համայնքի ներկայացուցիչների հետ։ Ամփոփելով ստացված առաջարկները՝ քարտուղարությունը մշակում է առաջարկների փաթեթ փոփոխման, կասեցման, ընդունման ենթակա իրավական ակտերի վերաբերյալ և ներկայացնում է խորհրդի քննարկմանը։ Խորհրդի հավանությանն արժանանալու դեպքում՝ փաթեթը ներկայացվում է ՀՀ կառավարության քննարկմանը։

4.4. ՏԵՍՈՒՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄՆԵՐԸ

Տեսչական բարեփոխումն արդյունավետ իրականացնելու նպատակով անհրաժեշտ է ինստիտուցիոնալ և օրենսդրական փոփոխություններին զուգահեռ աշխատել նաև տեսուչների պատրաստվածությունը և մասնագիտական որակները բարձրացնելու ուղղությամբ։ Այս առումով անհրաժեշտ է զուգահեռաբար աշխատել երկու ուղղությամբ.

- բարձրացնել տեսուչների մասնագիտական պատրաստվածությունը։ Վերահսկող մարմինը կոչված է օգնելու վերահսկվող սուբյեկտին՝ վերջինիս գործունեությունն օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխանեցնելու հարցում՝

ցույց տալով դեպի համապատասխանեցում տանող ուղիները։ Որպեսզի վերահսկողը (տեսուչը) կարողանա լավագույնս և արդյունավետ կերպով իրականացնել իր առջև դրված խնդիրները, նա պետք է վերահսկման ոլորտին տիրապետի վերահսկվողից ավելի լավ։

Տեսուչների որակավորման ցանկալի մակարդակին հասնելու համար քարտուղարությունը կազմակերպում է մասնագիտական վերապատրաստումների ծրագիր՝ ներգրավելով ոլորտի լավագույն մասնագետներին,

- աշխատել տեսուչների հոգեբանությունը փոխելու ուղղությամբ՝ ձգտելով հաղթահարել վերահսկման օբյեկտի նկատմամբ պետական կառույցի վերադասության մոտեցումը՝ ամրապնդելով տեսչության՝ որպես ծառայություն մատուցող կառույցի գաղափարը։ Մտածելակերպի, հետևաբար նաև վարքագծի փոփոխությունը լրջագույն խնդիր է, որ ակնկալվում է հաղթահարել տեսչական բարեփոխման ընթացքում հետևողական աշխատանքի, այդ թվում՝ նաև նպատակաուղղված դասընթացների միջոցով՝ ամրապնդելու համար առողջ հարաբերություններ տեսուչների և մասնավոր հատվածի միջև։

4.5. ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԱՌԱՆՁԻՆ ՏԵՍՉՈՒԹՅՈՒՆՈՒՄ՝ ՊԻԼՈՏԱՅԻՆ ՄԿԶԲՈՒՆՔՈՎ

Բացի հորիզոնական բարեփոխումից, որն ընդհանուր առմամբ ներառում է տեսչական մարմինների կրկնվող գործառույթների բացահայտումը և բացառումը, տեսչական մարմինների միջև տեղեկատվության փոխանակման արդյունավետ համակարգի ձևավորումը, տվյալների միասնական բազայի ստեղծումը և առողջ համակարգման ապահովումը, անհրաժեշտ է զուգահեռաբար իրականացնել նաև ուղղահայաց բարեփոխում՝ յուրաքանչյուր առանձին տեսչության գործունեության կատարելագործումը, որը ներառում է բոլոր տեսչություններում.

1. ռիսկի վրա հիմնված տեսչական ստուգումների համակարգի ներդրում (հաճախակի, չհամակարգված և ոչ տեղին ստուգումների բացառման նպատակով),
2. տեսչական գործընթացում ստուգման ցանկերի (check lists) և տեսուչների վարքագծի կանոնների ներդրում (որոնք նվազեցնում են անորոշությունները գործարարների համար),
3. տեսուչների վերապատրաստումներ (որոնց նպատակն է փոխել տեսուչների մենթալիտետն ու նրանց ծանոթացնել գոյություն ունեցող լավագույն փորձին)։

Հաշվի առնելով, որ Հայաստանում ներկայումս գործում է 18 տեսչական մարմին՝ բարեփոխումների առավել արագ տեսանելիություն և առավել մեծ արդյունավետություն ապահովելու նպատակով հորիզոնական բարեփոխմանը զուգընթաց անհրաժեշտ է իրականացնել ուղղահայաց բարեփոխում պիլոտային սկզբունքով՝ N 4 գծապատկերում նշված ժամակացույցին համապատասխան։



Քարտուղարությունը ընդ[illegible]տուղարությունը պետք
ցությ[illegible] մշակեն [illegible]թացք
տնտեսավարողների ընտրության[illegible]ր:
[illegible]ղար
թյամբ, պետք է մշակեն ծրագրում ընդգրկված յուրաքանչյուր սարքի գործառույթների շրջանակում առնվազն երեք ոլորտի համար նախատեսված ստուգման ցանկեր:

Քարտուղարությունը և պիլոտային ծրագրում ընդգրկված տեսչությունները պետք է մշակեն ծրագրում ընդգրկված տեսչությունների աշխատողների վարքագծի կանոններ:

Խորհուրդը պետք է քննարկի և հավանության արժանացնի այդ նախագծերը:

Խորհուրդը պետք է վերլուծի իրականացված բարեփոխումների արդյունքները և մշակի դրական փորձի տարածման ծրագիր:

5. ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ: ԲԱՐԵՓՈԽՄԱՆ ՇԱՐՈՒՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

Բարեփոխումների գործընթացի մասնակիցներն են՝

1) գործարար համայնքը
2) կառավարությունը, ընդ որում, բարեփոխումներին ներգրավվում են խորհուրդը և բոլոր տեսչությունները,
3) հասարակությունը:

Առաջին փուլ[6]: Հիմնախնդիրների (պրոբլեմների) բացահայտում (քանի որ բարեփոխումը կրելու է շարունակական բնույթ, ինչպես հիմնախնդիրների բացահայտումը, այնպես էլ բարեփոխումների մյուս փուլերը կիրականացվեն պարբերաբար, N 3 գծապատկեր: Այս փուլում բոլոր տեսչությունները տեսչական գործընթացում առկա հիմնախնդիրների և դրանց լուծումների վերաբերյալ իրենց պատկերացումները ներկայացնում են քարտուղարություն: Քարտուղարությունը միջոցներ է ձեռնարկում տեսչական գործընթացներում առկա հիմնախնդիրների և դրանց լուծումների վերաբերյալ գործարար համայնքի կարծիքն ստանալու համար՝ կազմակերպելով համատեղ քննարկումներ, կլոր սեղաններ, հարցումներ և այլն: Քարտուղարությունն ամփոփում է ստացված տեղեկատվությունը, վերլուծում այն և խորհուրդ է ներկայացնում տեսչական գործընթացում առկա խնդիրների և դրանց լուծումների վերաբերյալ առաջարկներ: Բացի պետական մարմիններից և գործարարներից՝ խնդիրներ կարող է առաջադրել նաև քարտուղարությունը կամ դրանք ստանալ քաղաքացիներից (ֆիզիկական անձանցից):

Երկրորդ փուլ: Երկխոսություն կառավարության և գործարար համայնքի միջև: Եթե տեսչությունների և գործարար համայնքի տեսակետները չեն համընկնում, քարտուղարությունը կազմակերպում է քննարկումներ: Քարտուղարությունը քննարկումների արդյունքում ձևավորված դիրքորոշումը (դիրքորոշումները) ներկայացնում է խորհուրդ: Շատ կարևոր է բարեփոխումների հիմնական առաջնայնությունների վերաբերյալ կոնսենսուսը գործարար համայնքի և պետական մարմինների միջև: Ըստ անհրաժեշտության երկխոսությունն իրականացվում է խորհրդի և գործարար համայնքի միջև:

Երրորդ փուլ: Գործողությունների ծրագրի մշակում, ընդունում և իրականացում: Տեսչական բարեփոխումների գործողությունների ծրագիրը մշակվում է քարտուղարության կողմից՝ հիմք ընդունելով երկխոսության արդյունքները, և վերանայվում է յուրաքանչյուր վեց ամիսը մեկ անգամ: Խորհրդի կողմից հաստատվելուց հետո այն ներկայացվում է ՀՀ կառավարության հաստատմանը: Քարտուղարությունը գործողությունների ծրագրի կատարման մասին յուրաքանչյուր ամիս հաշվետվություն է ներկայացնում խորհուրդ, որը վերահսկողություն է իրականացնում դրա կատարման նկատմամբ:

Չորրորդ փուլ: Մոնիթորինգի իրականացում և ազդեցության գնահատում: Քարտուղարությունն իրականացնում է տեսչական բարեփոխումների ընթացիկ մոնիթորինգ և բարեփոխումների ազդեցության գնահատում և յուրաքանչյուր վեց ամիսը մեկ անգամ արդյունքները ներկայացնում է խորհուրդ, որոնք հիմք են հանդիսանում բարեփոխումների հաջորդ փուլում հիմնախնդիրների (պրոբլեմների) առավել

[6] Հաշվի առնելով այն հանգամանքը, որ սույն հայեցակարգի հետ մեկտեղ որպես հավելված նախատեսվում է ընդունել նաև գործողությունների ծրագիրը, որը հայեցակարգի հետ մեկտեղ շահագրգիռ կերպով քննարկվելու է գործարար համայնքի հետ, ինչպես նաև դրվելու է հանրային քննարկման, հայեցակարգի ընդունման պահին արդեն իսկ ապահովված կլինեն վերջինիս 6-րդ կետում նշված 1-ին, 2-րդ փուլերն ամբողջությամբ (պրոբլեմների բացահայտում, երկխոսություն) և 3րդ փուլը՝ մասնակիորեն (գործողությունների ծրագրի մշակում, ընդունում):

արդյունավետ բացահայտման համար։ Տեսչական բարեփոխումների կատարման ընթացքի և արդյունքների վերաբերյալ խորհուրդը և քարտուղարությունը պարբերաբար իրազեկում են հասարակությանը, կազմակերպում են քննարկումներ, կլոր սեղաններ՝ հասարակության և գործարար համայնքի դիրքորոշմանը տեղեկանալու և հետադարձ կապ ապահովելու նպատակով։

6. ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Տեսչական բարեփոխման իրականացման արդյունքում ակնկալվում է ունենալ ժամանակակից, միջազգային ստանդարտներին համապատասխան նոր տեսչական համակարգ՝ տեսուչների նոր մտածելակերպով, որը ներառում է՝

- տեսչական համակարգ՝ առանց գործառույթների համընկնումների և կրկնորդումների, իրավասությունների հստակ տարանջատմամբ՝
  1) գործադիր իշխանության հանրապետական մարմինների միջև,
  2) պետական, տարածքային և համայնքային մարմինների միջև,

- բոլոր տեսչություններում ներդրված ռիսկի վրա հիմնված ստուգումների համակարգ՝ համադրելի և համատեղ օգտագործվող մանրամասն տվյալների բազաներով և համակարգի կիրառման նպատակով վերապատրաստված տեսուչներով,

- պետության կողմից սահմանված պարտադիր պահպանման ենթակա հստակ, ռացիոնալ կանոններ,

- ստուգումների իրականացման պարզ, թափանցիկ և կանխատեսելի ընթացակարգեր, ընթացակարգերը նկարագրող հրապարակված ձեռնարկներ,

- բողոքարկման արագ, արդյունավետ և մատչելի ընթացակարգեր,

- հավասարակշռության ապահովում տեսուչների իրավունքների և պարտավորությունների (պատասխանատվության) միջև,

- տեսուչների նոր մտածողություն և վարքագիծ, վերահսկման օբյեկտին որպես «հաճախորդ», այլ ոչ թե որպես «վերահսկվող» դիտելու ձևավորված մշակույթ։

Գոյություն ունեն տեսչությունների և բարեփոխումների որակի գնահատման մի շարք չափելի ցուցանիշներ, որոնք կիրառվում են բազմաթիվ երկրներում։ Ստորև ներկայացված չափորոշիչները թույլ կտան գնահատել տեսչական բարեփոխումները և տեսչությունների գործունեությունը, ինչն իր հերթին հնարավորություն կտա առավել արդյունավետ կերպով մշակելու բարեփոխումների հետագա քայլերը.

Սակայն գործընթացը շարունակական է, և յուրաքանչյուր վեց ամիսը մեկ անգամ անհրաժեշտ կլինի կրկնել 1-4-րդ փուլերն ամբողջությամբ։

- համապատասխանությունը պետության կողմից հստակ սահմանված պահանջներին,
- անորոշությունը գործարարների համար,
- գործարարների ծախսերը և ծախսերի օպտիմալացումը պետության համար։







7. ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսչական բարեփոխման հիմնական ռեսուրսը լինելու է քարտուղարությունը, որը կրելու է տեսչական բարեփոխումների իրականացման հիմնական բեռը: Այս առումով անհրաժեշտ է կենտրոնացնել բոլոր ուժերը՝ քարտուղարությունը լավագույն կադրերով համալրելու առումով: Անհրաժեշտ է, որ քարտուղարության աշխատողների համար հստակ սահմանվի պարտականությունների շրջանակ, պահանջվող որակավորումների նվազագույն համապատասխան շեմ, և հայտարարվի թափանցիկ և արդարացի մրցույթ՝ տեսչական բարեփոխումների գործընթացը լավագույնս իրականացնելու նպատակով:

Քարտուղարությունը բարձր որակավորում ունեցող փորձագետներով համալրելու նպատակով նախատեսվում է համագործակցել դոնոր կազմակերպությունների հետ: Ֆինանսավորման մի մասը կիրականացվի ՀՀ պետական բյուջեից, մյուս մասն ակնկալվում է ստանալ դոնոր կազմակերպություններից, այդ թվում՝ նաև Եվրոպական միությունից:

Տեսչական բարեփոխումների իրականացման գործընթացում ՀՀ կառավարության հիմնական գործընկեր կհանդիսանա Միջազգային ֆինանսական կորպորացիան, որից ակնկալվող աջակցությունը ներառում է տեսչական բարեփոխումների միջազգային փորձին տիրապետող խորհրդատուների ֆինանսավորում, աջակցություն

վերապատրաստումների կազմակերպման, կոնկրետ փաստաթղթերի ուսումնասիրության և առաջարկների մշակման հարցում, ինչպես նաև ՀՀ էկոնոմիկայի նախարարության հետ նախապես համաձայնեցված որոշակի միջոցառումների համաֆինանսավորում։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2009 թվականի
սեպտեմբերի 17-ի N 1135 - Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՏԵՍՉԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ



09_1135

	Խնդիր (պրոբլեմ)	*Նպատակ/ակնկալվող արդյունք*	*Գործողություն*	*Ժամանակացույց*											
				1-ին եռ (հոկ.-դեկտ.)			2-րդ եռ (հունվ-մարտ)			3-րդ եռ (ապրիլ-հուն.)			4-րդ եռ. (հուլ.-սեպտ)		
				1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1	Թիրախավորման բացակայություն	Կենտրոնացում ռիսկի վրա	*1.1.* ***Տեսչական ստուգումների նպատակադրում պիկոտային սկզբունքով*** • ՀՀ էկոնոմիկայի նախարարության շուկայի և սպառողների շահերի պաշտպանության պետական տեսչություն • ՀՀ առողջապահության նախարարության պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչություն • ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության պետական հրդեհային տեսչություն,		Ռիսկային խմբերի ձևավորում						Ներդրման գործընթաց			
			1.1.1. Տեղեկատվական բազայի ստեղծում												
			1.1.2. Ռիսկերի չափանիշների սահմանում												
			1.1.3. Տեսչությունների ռեսուրսների բաշխում ըստ ռիսկային ոլորտների												
			1.1.4. Տեսչական այցելությունների հաճախակիության բաշխում ըստ ռիսկայնության աստիճանի												
			1.2. ***Տեսչությունների տեղեկատվական համակարգի ձևավորում***		Ռիսկային խմբերի ձևավորում								Ներդրման գործընթաց		
			1.2.1. Տեսչության համար անհրաժեշտ տվյալների բազայի ստեղծում												
			1.2.2. Տեսչության և գործարարների համար ոլորտի տվյալների պիտանիության գնահատում												
			1.2.3. Տեղեկատվության հավաքագրման հարցում գործարար համայնքի հետ համագործակցության մեխանիզմների սահմանում, համագործակցության ապահովում												
			1.2.4. Տեղեկատվության հավաքագրման հարցում պետական այլ կառույցների հետ համագործակցության մեխանիզմների սահմանում, համագործակցության ապահովում:												
			1.3. ***Տեսուչների վերապատրաստում***												
			1.3.1. Իրավական, ընթացակարգային, հոգեբանական և տեխնի-կական առումով տեսուչների վերապատրաստման կարիքների գնահատում		Վերապատրաստումներ										
			1.3.2. Տեսուչների ուսուցման ծրագրերի կազմում և իրականացում՝ օգտվելով նաև տվյալ տեսչությունից և ՔՕԽ-ից դուրս գործող ուսուցման ծառայություններից՝ ելնելով												

			մասնագիտական ուղղվածության և վերահսկողական ունակությունների զարգացման առաջնայնությունից		
			1.3.3. Տեսուչների վարքագծի կանոնների ընդունում		
2	Թափանցիկության ցածր մակարդակ	Պարզ գործընթացներ (բողոքարկման, սանկցիաների և այլն)	*2.1.* ***Տեսչական ստուգումների գործընթացի արդյունավետության, կանխատեսելիության և թափանցիկության մակարդակի բարձրացում***	Նախագծում	Իրագործում
			2.1.1. Ստուգման ընթացակարգերը նկարագրող ձեռնարկի և ստուգման ցանկերի (check lists) մշակում և հաստատում՝ նախապես քննարկելով տեսչությունների և գործարար համայնքի հետ:		
			2.1.2. Բողոքարկման գործընթացների արդյունավետության և թափանցիկության բարձրացման մեխանիզմների սահմանում՝ նախապես քննարկելով համապատասխան իրավակիրառ մարմինների և գործարար համայնքի հետ		
			2.1.3. Տեսուչների համար ստուգման գործընթացի հիմնական բաղադրիչների վերաբերյալ դասընթացների կազմակերպում		
			2.2. ***Բողոքարկման մեխանիզմների արդյունավետության բարձրացում***	Նախագծում	Իրագործում
			2.2.1.Քաղաքացիների և գործարարների բողոքներն ընդունելու նպատակով հեռախոսագծի (թեժ գծի) ներդրում տեսչություններում		
			2.2.2. Բողոքներն ուսումնասիրելու մեխանիզմների սահմանում		
3	Օրենսդրությամբ սահմանված հնացած, հակասական և ավելորդ պահանջների առկայություն	Նպատակաուղղված, նորացված կանոններ	*3.1.* ***Ստուգման ենթակա ոլորտներում օրենսդրությամբ սահմանված պահանջների հստակեցում***		Ուսումնասիրություն
			3.1.1. Ստուգման ենթակա ոլորտներում գործող օրենսդրության պահանջների ուսումնասիրություն		
			3.1.2. Գործող պահանջների համադրում միջազգային փորձի հետ, «անտրամաբանական կանոնների» վերհանում և բացառման ուղղությամբ առաջարկների ներկայացում՝ հիմնվելով քարտեզագրման վրա		Առաջարկների ներկայացում
			3.2. ***Պատժամիջոցների համարժեքության և բազմազանության ապահովում***		Ուսումնասիրություն
			3.2.1.Կիրառվող տույժերի կառուցվածքի և տույժերից յուրաքանչյուրի կիրառման չափանիշների սահմանում		
			3.2.2. Տույժերի նշանակման նոր մեխանիզմի մշակում		
			3.2.3. Պատասխանատվության միջոցների կիրառման դասակարգված մոտեցումների մշակում, որոնցում առաջին ընտրությունը		Առաջարկների ներկայացում

			նախազգուշացումներն ու համագործակցող մոտեցումներն են՝ առարկելու դեպքում գործարարներին բողոքարկման լայն հնարավորությունների ընձեռմամբ։Գործարարների կողմից լավ վարքագծի դրսևորման, մասնավորապես խախտումների արագ ուղղման խթանման մեխանիզմների մշակում							
4	Կրկնվող գործառույթների առկայություն	Ինստիտուցիոնալ բարեփոխում	*6.**Կրկնվող գործառույթների բացահայտում և վերացում***	Կրկնորդումների քարտեզի նախապատրաստում				Առաջարկվող լուծումներ	Իրագործում	
			6.1.1. Տեսչությունների գործառույթների վերլուծություն, կրկնվող և համընկնող գործառույթների վերհանում, գործառույթների քարտեզագում							
			6.1.2. Կրկնվող և համընկնող գործառույթների բացառման ուղղությամբ առաջարկների ներկայացում, մեխանիզմների մշակում և ներդրում							

Հավելված N 3
ՀՀ կառավարության 2009 թվականի
սեպտեմբերի 17-ի N 1135 - Ն որոշման

Կ Ա Զ Մ

ՏԵՍՉԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ՝ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՏՎԱԾԸ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՂ

ՀՀ վարչապետ (խորհրդի նախագահ)

ՀՀ Նախագահի աշխատակազմի ներկայացուցիչ (համաձայնությամբ)

ՀՀ Ազգային ժողովի ներկայացուցիչ (համաձայնությամբ)

ՀՀ էկոնոմիկայի նախարար

ՀՀ բնապահպանության նախարար

ՀՀ գյուղատնտեսության նախարար

ՀՀ առողջապահության նախարար

ՀՀ տրանսպորտի և կապի նախարար

ՀՀ քաղաքաշինության նախարար

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար

ՀՀ կրթության և գիտության նախարար

ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարար

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարար

ՀՀ ֆինանսների նախարար

ՀՀ արդարադատության նախարար

ՀՀ տարածքային կառավարման նախարար

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահ

ՀՀ կենտրոնական բանկի ներկայացուցիչ (համաձայնությամբ)

ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի նախագահ

Երևանի քաղաքապետ (համաձայնությամբ)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված N 4
ՀՀ կառավարության 2009 թվականի
սեպտեմբերի 17-ի N 1135 - Ն որոշման

«Հավելված N 3
ՀՀ կառավարության 2008 թվականի
սեպտեմբերի 25-ի N 1096-Ն որոշման

Կ Ա Ռ ՈՒ Ց Վ Ա Ծ Ք

ԾՐԱԳՐԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ

Կառուցվածքային ստորաբաժանումներ

Եվրոպական միության ծրագրերի բաժին

Գործարար միջավայրի բարելավման բաժին

Տեսչական բարեփոխումների բաժին»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված N 5
ՀՀ կառավարության 2009 թվականի
սեպտեմբերի 17-ի N 1135 - Ն որոշման

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ N 1 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ
ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2008 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 1573-Ն ՈՐՈՇՄԱՆ N 5 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ
ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(հազ. դրամ)

Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման			Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, տնտեսագիտական դասակարգման հոդվածների, ֆինանսավորվող ծրագրերի և դրանք իրականացնող մարմինների անվանումները	Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները՝ փակագծերում)	
բաժինը	խումբը	դասը		ինն ամիս	տարի
1	2	3	4	5	6
			ԸՆԴԱՄԵՆԸ՝ ԾԱԽՍԵՐ	(5900.0)	(15274.0)
			այդ թվում՝		
04			ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	(5900.0)	(15274.0)
			այդ թվում՝		
	01		Ընդհանուր բնույթի տնտեսական, առևտրային և աշխատանքի գծով հարաբերություններ	(5900.0)	(15274.0)
			այդ թվում՝		
		01	Ընդհանուր բնույթի տնտեսական և առևտրային հարաբերություններ	(5900.0)	(15274.0)
			այդ թվում՝		
			05. Արտադրանքի որակի փորձաքննության ծառայություններ	(5900.0)	(15274.0)
			ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	(5900.0)	(15274.0)
			ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ	(5900.0)	(15274.0)
			այդ թվում՝		
			ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ	(5900.0)	(15274.0)
			այդ թվում՝		
			Ընթացիկ դրամաշնորհներ պետական հատվածի այլ մակարդակներին	(5900.0)	(15274.0)
			այդ թվում՝		
			Այլ ընթացիկ դրամաշնորհներ	(5900.0)	(15274.0)
04			ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	10945.0	15274.0
			այդ թվում՝		
	01		Ընդհանուր բնույթի տնտեսական, առևտրային և աշխատանքի գծով հարաբերություններ	10945.0	15274.0
			այդ թվում՝		

1	2	3	4	5	6
		01	Ընդհանուր բնույթի տնտեսական և առևտրային հարաբերություններ	10945.0	15274.0
			այդ թվում՝		
			02. Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում (նախարարությունների աշխատակազմերի մասով)	10945.0	15274.0
			ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	10945.0	15274.0
			ԸՆԴԱՄԵՆԸ՝ ԾԱԽՍԵՐ	10945.0	15274.0
			այդ թվում՝		
			ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ	4388.0	8717.0
			այդ թվում՝		
			Աշխատանքի վարձատրություն	3286.0	6572.0
			այդ թվում՝		
			Դրամով վճարվող աշխատավարձեր և հավելավճարներ	2620.0	5240.0
			այդ թվում՝		
			- Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	2620.0	5240.0
			Փաստացի սոցիալական ապահովության վճարներ	666.0	1332.0
			ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՊԱՐԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ	1102.0	2145.0
			այդ թվում՝		
			Շարունակական ծախսեր	714.0	1369.0
			այդ թվում՝		
			- Էներգետիկ ծառայություններ	487.0	975.0
			- Կոմունալ ծառայություններ	5.0	10.0
			- Կապի ծառայություններ	222.0	384.0
			Պայմանագրային այլ ծառայությունների ձեռքբերում	39.0	78.0
			այդ թվում՝		
			- Համակարգչային ծառայություններ	39.0	78.0
			Նյութեր (Ապրանքներ)	349.0	698.0
			այդ թվում՝		
			- Գրասենյակային նյութեր և հագուստ	349.0	698.0
			ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐ	6557.0	6557.0
			այդ թվում՝		
			ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ	6557.0	6557.0
			այդ թվում՝		
			ՄԵՔԵՆԱՆԵՐ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ	6557.0	6557.0
			այդ թվում՝		
			- Վարչական սարքավորումներ	6557.0	6557.0

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ